ԱՐՄԱՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկաի համար տարեկան 4 ոսկւոր թղթադրմ.
Եւրոպաի և այլ տեղերի համար տրկն. 20 Ֆրանգ
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնէգիրները կանխիկ կը վճարուին։ Վեցամսեայ կամ եռամսեայ բաժնորդագրութիւններ ալ կընդունուին, առանց անէ յաւելման բաժնէգինն վրայ։
Խմբագիր-Տնօրէնին հետ կարելի է տեսնուիլ խմբագրատունը (rue Vacon, 50) ամեն օր կէսօրէնյետոյ, ժամ 2էն մինչև 4 միայն։

Թ ՏԱՐԻ ԹԻՒ 34

1886 ԴԵԿՏԵՄԲԵՐ 15

(ԴԵԿՏ. 3 Հ. Տ.)

ՀԱՐԹԱԿՈՒԹԻՒՆ

Կը հրատարակուի Դշ. և Երք. օրեր

ՊԱՏՄԱԾՆԵՐ

Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Ծանուցման 1 միլէկ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։
Նամակ կամ ծրար պէտք է դրկել խմբագրութեան հետևեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*, MARSEILLE (France)

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau dela Rédaction (Rue Vacon, 50)

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նամակ Ձավաւն (Բադապեշտ).—Նամակ Ռուսիայէն (Տիֆլիս).—Վարժապետութիւն ի Գաղկարիա (Նամակ Շապկաեն).—Հայեր յԵգիպտոս.—Հայեր ի Թիւրքիա.—Հայեր ի Իտալիա.—Ֆրանսական լուրեր.—Արտասահմանի լուրեր.—Հայկական քնարն յԱմերիկա.—Առեւտրական.—Յանձնարարութիւններ.—Բանասիրական (Գիժը):

ՆԱՄԱԿ ՁԱՎԱՆԷՆ

Բատումի, 9 նոյեմբերի 1886

Ձեր «Արմէնիա» լրագիրը շարունակ կատանամ և նորա թերթերի մէջ կ'կարդամ զանազան տեղեկութիւններ Հայաստանի ընչքնօրինութեան վրայ։ Տարակոյս չկայ, որ մեծագոյն լրագիրներուն միջոցաւ է լեալ որ զանազան ազգեր այս լուսաւոր դարուս կարողացել են իրենց ազատութիւնն ձեռք բերել։

«Արմէնիա»ն, կ'խոստովանիմ, որպէս իր ընդարձակ և ազատ տեսութեամբ կնշմարուի, յեզափեսական հոգի է չանուն ներչնչի մեր ազգայնոց մէջ յաշատութիւն հայրենեաց, բայց այս նպատակին հասանելոյ համար, պիտի չանայ իր լրագիրն տարածի որև է միջոցաւ մեր Տաճկաստանի և Ռուսաստանի ազգայնոց մէջ, ուր հայութիւնն մեծամասնութիւն է կազմում, նոցա մէջ տածել ինքնօրինութեան գաղափարն, և կրթել նոցա միտքն առ սէր հայրենեաց, որպէս պի ի պատեհ ժամու, զանազան պատահարներից օգուտ քաղելով յեղափոխական դրօշակ տարածեն ընդդեմ իրենց բռնաւորաց։—

Բայց որքան սրագնելք կայ «Արմէնիա»ի մասից առ մեծամասնութիւնս հայոց, չէ կարելի «Արմէնիա»ն իր նպատակին հասանի։

Այո՛, թէև «Արմէնիա»ն տարածի գաղթական հայոց մէջ և վշտակից առնէ նոցա Հայաստանի դժբախտ վիճակի վրայ, և զանազան միաբանութեանց հիմնադրութեանց պատճառ լինի, բայց այս ոչինչ օգուտ չէ ընծայել Հայաստանին, որքան որ բուն Հայաստանի ազգայինք չեն ըմբռնուն և չեն կրթեալ այս յեղափոխական զգացմամբ։ Եւ որով միջոցաւ պիտի կրթուին, եթէ ո՛չ ի ձեռն այսպիսի տպաւ գաղափարօք ի լրագրոյ։—Վասնորոյ նախ պիտի միջոցներ որոնուի տարածել այս լրագիրը նոցա մէջն, որպէս պի նոցա միտքն կրթուի այս մեծ գործի համար այսինքն Հայաստանն ինքնօրինութեան մէջ դնելոյ։ Այս նպատակին հասանելոյ համար «Արմէնիա» լրագ-

Մեծարանօք ողջունիւ Ձեզ
Գ. Գ. ԳԱՍՊԱՐԵԱՆ,

ՆԱՄԱԿ ՌՈՒՄԻԱՅԷՆ

Տփխիս, 18/30 նոյեմբ. 1886

Մի հայ անհատ կամ նոյն իսկ ընտանիք գաղթելով օտար երկիր իր հայրենիքէն՝ լինի դա Ռուսահայաստանը կամ Տաճկահայաստանը՝ սկըզբում յարաբերութիւնների մէջ է լինում իր ծննդավայրի հետ։ Հին հայրենիքում կատարվող անցքերը հետաքրքիր են լինում նրան, մտածմունքի երբեմն նաև հոգատարութեան առարկայ։ Սակայն երբ անցնում են մի քանի տարիներ և նա ընտելանում է իր նոր բնակավայրի հետ, այն ժամանակ սկսում է քիչ քիչ մոռացութեան տալ—անցնում են մի քանի տարի ևս՝ և տեսնում կրում է իր մայր-հայրենիքի հետ համերաշխութեան բոլոր կապերը։

Առաջի տարիները նա ձեռք է բերում հայ լրագիր, իսկ յետոյ հայ լրագիրը այլևս նրան չէ գոհացնում և դրան փոխարինում է մի մեծագիր և էժանագին օտար թերթ։ Հայ լեզուն՝ մոռացվում է։

Այս ամենը հաստատվում է այն ամեն վաստակ որ մենք կովկասցի-նեռս տարիների ընթացքում չենք գաղթած հայերի կազմից, այն հայերի—որոնք ապրում են Գերմանիա, Հոլլանդա, Անգլիա, Իտալիա, Իսպանիա, Բուլղարիա, Ռումանիա, Ամերիկա և.ն. եթէ մին մին պատահում էլ են թղթակցութիւններ, դրանք լինում են հայրենիքից նոր հեռացածներից։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻԺԸ

(Իրական կեանքից)

(Շարունակութիւն 33րդ թիւեն եւ վերջ)

Սակայ սակայ նա մոռնում էր մի խանութ տեղեկանալու համար թէ նրան ո՞վ է կանչել և ի՞նչի համար—մինչդեռ նրան ոչ ոք չէր ուզել. սակայ սակայ ճանապարհի կէսին ինքը կանգնեցնում էր մեկին և մի ինչ որ հարց առաջարկում—նրան լսում ու անցնում էին առանց իսկ պատասխանի արժանացնելու..., Ոչ ոք չհասկացաւ նրան և ոչ ոք չօգնեց նրան—այլ ընդհակառակը չաղակրաւ ծանօթների մի խումբ դրեթէ ամեն օր թափում էին նրա գլխին իրանց կատակային զուարճախօսութիւնները։ Կային և այնպիսիք որոնք աւելի հեռու էին գնում և ամօթխածութեան իսկ հակառակ վարվում նրա հետ։

Նա բոլորովին լքաւ։ Մինչև այդ ժամանակը նա անհատաւտ չէր և ծաղրում էլ էր այդ պիսիներին—իսկ այժմ այդ երկրորդ դժբաղդութիւնը նա համարում էր նախախնամութեան արդար պատիժ հօր առևտրական քայլի համար...

Նա տատանվեց... և սակայն ոչ ոք չկարկառեց դէպի նա օգնութեան ձեռն։

Արտաշէսը դեռ խելագար չէր—այլ հանապարհի վրայ։

Կային և անկեղծ բարեկամներ, որոնք բոլոր սրտով ցաւում էին նրա վրայ նկատելով նրանում ցնորման նշաններ, բայց և նրանք իրանց պարտքը կատարած համարեցին հօրը տեղեկութիւն տալով։ Եկաւ հայրը—բայց և նա չհասկացաւ որդուն։ Արտաշէսը չէր թոյլ տալիս որ բժիշկ կանչեն։ Միակ ելքը Թ. քաղաքը Թողնելն էր։ Նա հաւաքեց իր ցրիւ եկած այժերը, թողեց իրան չրջապատող մթնոլորտը և ուղևորվեց մի ուրիշ փոքրիկ քաղաք։ Նա դատ այդտեղ մի հասարակ պաշտօն—սակայն երկար չդիմացաւ։ Նրա մոռաւոր դրութիւնը խախտած էր և նա քայքայվեց բոլորովին...

Հայրը նրան բերել տուեց իր մօտ գիւղը և չուտով սկսաւ բարբարոսական միջոցներ գործ դնել նրան խելքի բերելու։ Բայց Թէ՛ փողահարը Թմբկահարի հետ իրանց խլացուցիչ երաժշտութիւնով, Թէ՛ սաիրիչը իր նչտարով, Թէ ինքը հայրը իր գաւազանով միայն սատկացրին հիւանդութիւնը։ Ընտանեկան յարկը անտանելի դարձաւ Արտաշէսին և նա սկսաւ խոյս տալ տանից։ Մէկ օր լուր կը բերէին Թէ նրան տեսել են այս ինչ գաւառումը, միւս օր՝ այս ինչ գիւղումը, երրորդ օրը՝ այս ինչ լերան ստորոտումը։ Նրա բաղդից ամեն տեղ գտնվում էին բարի մարդիկ, որոնք հսկում էին նրա վրայ, կամ պահապանով յետ էին դարձնում տուն։ Թէ իր և Թէ չրջակայ գիւղերում նրան արդէն ճանաչում էին։ Նա բնաւ ուշ չէր գարձնում իր եաւից վազող «գիժ Արտաշէսը» կանչող չար երեխաներին։

Երեք տարի առաջ ես գնացի այդ գիւղը և նրա մասին այդ բոլորը պատմեցին ինձ։

Մէկ օր ճաշի ժամանակ ծառայն յայտնեց որ «գիժ Արտաշէսը» բարձրանում է մեր սանդուխներով։ Ես պատուիրեցի չընդհանդարել նրան։ Ներս մտնելով Արտաշէսը նախ վակեց դուռը՝ յետոյ հանելով գլխարկը դրեց լուսամուտի վրայ և մոտենալով ինձ

—Դուք ցանկացե՞լ էք ինձ տեսնելու, ասաց։—

Ես թոթվելով նրա ձեռքը

—Շատ ուրախ եմ, ասացի, որ քեզ տեսնում եմ, կցանկանայի որ միշտ գայիր ինձ մօտ ևն։ Ձաշեցինք միասին։ Նա աւելի լսում էր քան Թէ խօսում։ Նկատեցի որ նրա խօսքերը անկապ էին։ Հետևեալ օրը եկաւ գիրք խնդրեց կարդալու. այս անում էր և ազգականների հետ։ Այնուհետև մի չարաթ գրեթէ ամեն օր նա յաճախում էր իմ բնակարանը։ Եթէ ես տանը չէի լինում՝ նա սպասում էր ինձ, կամ իր ասելիքը մէկին տալըսպրում ու գնում։ Մէկ օր, նա բացեց կարծեմ, ինձ իր սիրտը. խնդրեց արտասահմանի անցագիր վեր առնել իր և իմ համար։ Ես դժարութիւններ մէջ բերելով յետաձգում էի, մինչև որ հայրը՝ նկատելով նրա իմ բնակարանը յաճախելը՝ ծեծել և պատուիրել էր անհանգիստ չանել ուրիշներին։

Շուտով ես հեռացայ այդ գիւղից։ Նոյն տարին հայրը նրան ուղարկեց Թ. քաղաքի գժանոցը, ուր Արտաշէսը գտնվում է և մինչև այժմ։

Ֆ.

ԳԻՒՏ Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՂՆԵՐԷՆ

Ի Վաղարշապատ, 22/4 փետրվարի. Ուրբաթ առաւօտ մեր քաղաքի մէջ տարածուեցաւ «Ճշմարիտ Լուր» անունով թերթ մը, որ կը պարունակէ հետեւեալ գիւտը։

Ինչպէս գիտէք, Վաղարշապատի մէջ կան հին ժամանակներու մնացորդներ, որոնք ամէն տարի կը հետաքրքրեն հնախոյզ ճամբորդները։ Այդ մնացորդներուն մէջ կան նաեւ հին գերեզմաններ, որոնք ալ կը գրաւեն մեծ տարածութիւն մը։ Ասոնց

տի ընդունի որ ջրանցքը միջազգային լինի, բայց միմիայն վաճառականական առևտրի համար։

—Times և Standard կըսեն թէ Գերմանիան իրաւունք ունի սառուցայնել իր ծրագրանակ քանի որ Ֆրանսան կը չարունակէ իր սպառազինութիւնները։ Այդ լրագիրները այնպէս ցոյց կուտան թէ պատերազմ անխուսափելի կերևի Ֆրանսայի և Գերմանիայի մէջ։

—Գերլինէն կը հեռագրեն դեկտ. 13ին թէ պատերազմական նախարարը նոյն օր զինուորական օրէնքի ծանձնաժողովին առջև կարդացած է մի ծայտաբարութիւն որի մէջ կան և հետևեալ խօսքերը «եթէ ծանձնաժողովը չյուսախանանար այն բացատրութիւններով որ կառավարութիւնը տուաւ նկատի ծրագրի մասին թէ՛ ռազմագիտական և թէ՛ քաղաքագիտական տեսակէտներով, պետական քարտուղարը արտաքին քաղաքականութեան վիճակին վրայ մինչև այժմ ըսուածներէն աւելի մի բան չպիտի կրնայ ըսել առանց վնասելու թէ՛ Գերմանիայի արտաքին յարաբերութիւններին և թէ՛ ընդհանուր խաղաղութեան»

—Պերլինի մէջ դեկտ. 12ին կէսօրէն յետոյ ժամ երկուքին կայսերական պալատին առջև ձերբակալած են մէկը որ մի քար նետած էր պալատի մէկ պատուհանին դէմ։ Կայսրը ժամ 4ին ունկնդրութիւն ըրած է պետական քարտուղար կոմս Հ. Պիսմարքին և ժամ 5ին ալ ճաշած է իր ընտանիքի հետ։ Իր առողջութեան մասին տարածուած վատնդաւոր լուրերն ճիշդ չեն։

—Վիէննայէն կը հեռագրեն դեկտ. 12ին թէ պուլկար պատուիրակութիւնը մի երկար տեղեկագիր ղրկած է Սօֆիա։ Նախորդ օրը ռուսական, ամերիկեան և իտալական դեսպանները իրենց կառքերը նոտած անձամբ գնացեր և իրենց այցետոմսերը թողուցեր են այն հիւրանոց ուր իջած են պուլկար պատուիրակները։ Անգլիական դործակատարը մի կարճ այցելութիւն ալ ուսած է իրենց։

—Ռուս կառավարութիւնը հրաման ղրկած է Սօֆիա ռուսական դործակատարութեան քարտուղար Պ. Սօմօֆին որ այնտեղ մնայած էր, պատրաստ դանուիլ մեկնելու։

—Կ. Պօլսէն կը հեռագրեն դեկտ. 12ին թէ պետութիւնները ընդհանրապէս այն պատասխան ուսած են Պուլկարիայի նկատմամբ Բ. Դրան ղրկած դեկտ. 7ի շրջաբերականին ինչ պատասխան որ ուսած էին դեկտ. 3ի շրջաբերականին։ Այնու ամենայնիւ մի քանի պետութիւններ, և մանաւանդ Աւստրիան և Իտալիան կասկած յայտնած են թէ Բ. Դրան առաջարկը չպիտի կրնայ դործադրուիլ։ Այդ կասկածը հաստատուելուն կը գոնէ Պուլկար կառավարութեան ուսած պատասխանին որ կը յայտարարէ թէ Պուլկարիան բացարձակապէս հակառակ է Մէնկրելիայի էշխանի ընտրելութեան, թէ երկիրը իրեն արժանի մի իշխան կը պահանջէ, ինչպէս Ալէքսանդր իշխանը կամ վ. արտէմար իշխանը և կը մերժէ ճանաչանդ մի այնպիսի իշխան որ Ռուսիայի հետ կապեր ունի։ Բ. Դրան այս անյաջողութիւն պատճառ եղած է որ դարձեալ նախարարական փոփոխութեան լուրերը սկսած են շրջիլ և խօսք կայ թէ Սաչիտ փաշան վերատին կը կոչուի Մեծ Եպարքոսութեան պաշտօնին, Նոյմպէտ և Խահէմ փաշաի և Ձէվատէթ փաշաի անունները յառաջ կը բերուին։

—Բ. Դուռը արդիլեր է Յոյներուն պատրիարքին պօհաբանական աղօթք մատուցանել դեկտ. 13ին, Յունաստանի թագաւորին որդի իշխան Կոստանդինի չափահասութեան առթիւ։

—Լոնտոնէն կիմացուննն թէ դեկտ. 14ին Անգլիական կառավարութիւնը որոշեր է եգիպտական ժողովն բանալի դործադրութիւնը 10000ի և դրաման անդլիական բանակի դործերի թիւը 5000ի։

ՀԱՑԿԱԿԱՆ ՔՆԱՐՆ ՅԱՄԵՐԻԿԱ

Նիւ Եորք բնակող մեր բարեկամներէ մին ձեռք բերած լինելով Մեծ. Գրն. Հ. Էկինեանի գրած երդերի մի հատ քաջածոյն յղած է մեղ ի հրատարակութիւն։

Շնորհակալութեամբ կը հրատարակենք մերթ ընդ մերթ նոյնանէ մի քանին «Արմենիա»ի մէջ, «Հայկական քնարն Յամերիկա» վերնագրին տակ ցոյց տալու համար թէ ամերիկեան աստղերին տակ ապրող մեր հեռաբնակ ազգակիցները ի՛նչ կզգան և ի՛նչ կը խորհին։ Թիւրքիոյ և Ռուսիոյ մէջ գտնուող հայ բանաստեղծների երդերն դրեթէ հանրածանօթ դարձած են մեր մէջ։ Աւելորդ չլինիր ուրեմն որ Ամերիկեան հայկական քնարն ալ ճաշակի համար մի քիչ հնչէ մեր մէջ «Արմենիա»ի միջոցով, որպէս զի նորա ներշնչումներուն ալ ծանօթանանք փոքրիշատէ։

Յուսով ենք որ այդ քնարի թրթռումները հետաքրքրութեամբ և ախորժով պիտի կարդացուին «Արմենիա» ընթերցողներէն որոնք Ամերիկահայ բանաստեղծին, Մեծ. Պրն. Հ. Էկինեանինման, իրենց Մայր-Հայրենիքէ հեռի օտար աստղերի տակ ոտիպուտած են անցուցանել իրենց կեանք, հանդամանքներն և ժամանակն այդպէս բերած լինելով։

ԻՄ ԿՏԱԿԸ

Ես կը մեռնիմ, ով ընկերներ, ալ յոյս չկայ ապրելու,
Մահու քրտինք պատեց ճակատս,
հոդիս պատրաստ մեկնելու.
Ա՛խ, կուզէի ապրիլ քիչ մ՚ալ, երթալ հասնիլ Հայրենիք
Հոն դոհ սրտով մեռնիլ դրկել ղիմ հարց ոսկերք իմ նախնիք։
Բաղդին սակայն ձեռքերն այսօր դիս կը բաժնեն ի կենաց,
կեանք որ չանախմատաղ ախոյ նուիրեցի Հայրենեաց.
Սուրբ Հայրենիք, ներէ՛ որդւոյդ որ քոյդ այսօր կարօտով
Ննջէ ի տար յօտար աշխարհ. հեռի քեզմէ ո՛չ սրտով։
Մնայ բարեաւ իմ Հայաստան, ծնայ բարեաւ Հայրենիք.
Ողջամբ ծնան Հայ զաւակներն, ողջամբ մեր տուն սիրելիք.
Ողջամբ ծնաք, սիրուն ընկերք. նժդե՛հ սրտեր, մ՚արտասուէք.
Ես կը մեռնիմ. մի՛ մռնաք պիս, իմ յիշատակն յարդեցէք։
Հայ պանդուխտնե՛ր, ես կը մեռնիմ քաղցր Հայրենեաց կարօտով.
Ո՛չ հայր, ո՛չ մայր, ո՛չ քոյր եղբայր ներկայ եղան մահճիս քով։
Ա՛խ, թէ պատկեր տխուր մահուս ձեր մտաց մէջ պահեիք,
Որ դիտնալով յարգն Հայրենեաց չուտ Հայաստան դառնայիք։
Երբոր մարմինս անշնչանայ, ամփոփեցէք զայն ի հող.
Շիրմիս վրայ տապանագիր դրէք միայն երկու տող.
Ըսէք թէ հոս ննջէ մի Հայ որ կարօտով իւր երկրին,
Իւր Հայրենեաց, իւր սիրելեաց փչեց ղմունչ իւր յետին։
Երբ գիս գնէք ի գերեզման, Հայաստանէն ափ մը հող
Լցէք վրաս. գէթ Հայրենի հոտ մը բուրէ շիրմէս թող։
Հայ եղեմէն կաթ մը ցօղիկ, Հայ աղտոտէն փունջ մը վարդ.
Թող իմ անչուք գերեզմանին վառք պաճուճանք լինին զարդ։
Օր մ՚ալ գուցէ Հայաստանէն սահման Հայու հոտառած.
Վաղէ անցնի Մեծն Ովիւան՝ գանէ տապանն իմ տառած,
Տաք արտասուօք թանայ զերեզման իմ ցամաքեալ տապանին,
Գուցէ յայնժամ իմ ոսկերներն հողին ներքև կը հանգչին։

Նիւ Եորք, 86 Հ. ԷԿԻՆԵԱՆ

ԱԼ ԲԱՒ Է

—

Բաւ է ալ գոյնդ մեր հոգւոյ աչքեր.
Բաւ է ալ խցնդ մեր սուր ականջներ։
Երթանք այն ձայնին որ մեղ կը կանչէ,
Ձայնին Հայրենեաց որ մեղ կաղաչէ։
Հերիք ալ հերիք անտարբեր ձեռնք.
Թողունք օտարներն Հայրենիք երթնք։
Դրկենք մեկզմեկ ողջոյն տանք միաբանց.
Թողունք օտարներն ի սէր Հայրենեաց,
Ձեռք տանք իրարու հասնինք Սիրատ.
երթանք Հայրենիք ողջունեմք ջերմ-պատ։
Բա՛ւ է Հայրենիք բաւ ալ ուրանանք.
Բաւ օտարութիւն ընենք մեղ դիմակ։
Հայե՛ր, երբ ա՛ն երբմենք պիտի գիտնանք.
Որ մեր Հայրենիք տխուր աւերակ
Ողբայ հեծեծէ արիւն արցունքով.
Մուայլ խաւարի անգութ ձեռքին տակ . . .
Հերիք ալ հերիք, հերիք համբերենք,
Հերիք նախատինք մեղ պատիւ սեպենք։

Հայեր էք ու մեք էք, ինչո՞ւ չենք զգար,
Ինչո՞ւ մեր սրտերն դարձան եղան քար
Ինչո՞ւ չի լսենք ձայն մեր Հայրենեաց,
Ինչո՞ւ արտասուքն հրեշտակին Մատաց . . . :
Հերիք ալ այսպէս, Հայ եղբարք հերիք,
Բաւ ալ սև բաղդին լինենք խաղալիք։

Նիւ Եորք, 86 Հ. ԷԿԻՆԵԱՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԵԿՏ. 7ԷՆ 14

ԳԻՐԱՏՈՒԹԻՒՆ

ԲՈՒԻՐԴ. Ընդհանրապէս անղօր է, չաբթուս վաճառումները 1700 հակի կը հասնին որոցմէ կը նշանակեմք, 200 հակ երկրորդ կարգի կիճիւ կէս լուացուածք 135 և չը լուացուածք 120 ֆր. 380 հակ Խորասան սպիտակները 160 և դունաւորները 135 ֆր. 90 հակ Մուսուլ Գալաատա 185 ֆր. 100 հակ Հալէպի լուացուած սպիտակները 220–230 և դունաւորները 140 ֆր. 350 հակ Էնգաբէ լուացուածները 195 և չը լուացուածները 125 ֆր. 100 քիլօն։

ԲԱՄԳԱԿ. Հրապարակը զօրանալով գիներն ալ բարձրանալ սկսան, օրուան գիները Զմիւռնիա 56–58 կիպրոս 55–60 Մերիա 50–55 ֆր. 50 ք.։

ՄԵՏԱՔՍԵՂԷն. Միշտ հրապարակը հատատ է, վաճառուեցաւ 75 հակ Սիրիոյ մետաքս 53–57 ֆր. 300 քիլօ Նաբլսի կոկոն 8¾ ֆր. 1600 քիլօ Գարսկատանի ֆրիզոն 8¼ ֆր. քիլօն և 20,000 քիլօ ղանդան տէչէներ ղանդան գներով։

ԿԱՆԵՓ. Թուլցած է, ըստ տեսակին 57–62 ֆր. 100 քիլօն։

ՅՈՐԵՆ. Մի քիչ ծանրացաւ, գիները 16–20 ֆր. 100 քիլօն։

ՎԱՐՍԱԿ (avoine). 11½–13 ֆր. 100 քիլօն։

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ (maïs). 12¼–12½ ֆր. 100 քիլօն։

ԼՈՒԲԻԱ. Խիստ թոյլ է, Տրապիզոնի մաքրուած տեսակները 20–21 և Ռումանիայ սպրանքները 15–16 ֆր. 100 քիլօն։

ԹՈՋՆԱԿԵՐ (alpiste). 29 ֆր. 100 քիլօն։

ՇՈՒՇՄԱ (sésames). Սիրիոյ սպրանքները 40 ֆր. 100 քիլօն։

ԽԱՇԽԱՇ (pavots). 27½ ֆր. 100 քիլօն։

ԿՏԱՒԱՀԱՏ. 25 ֆր. 100 քիլօն։

ԿԱՂԻՆ. Զը կտրածը 40 և կտրածը 95 ֆր. 100 քիլօն։

ԴԵՂՆԱՀԱՏ. 120–160 ֆր. 100 ք.։

ՍՅՈՒԻ ՄՈՐՔ. 25–36 ֆր. տուփնան։

ԱՐՏԱՔՈՒՆԻՔ

ՇԱՔԱՐ. 3 քլոնոյը 42½ և 2 քիլոնոյը 43 ֆր. 100 քիլօն։

ՍՈՒՐՃ. Բիօր սպրանքները ըստ տեսակին 76–87 ֆր. 50 քիլօն, հրապարակը խիստ հատատ է։

ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ. Ձերմակները 3, 25–3, 50 և սևերը 3, 50–4 ֆր. ք.։

ՊՂՊՂ. Ըստ տեսակին 88–100 ֆր. 50 քիլօն։ Գ.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԴԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱՑԻ
ԳԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
«Թիֆլիզի հայ. գրբ. հրատրկր. ընկերքե.»

==

Մեծանուն բանաստեղծ Դամառ–Քաթիպալի (Ռ. Պատկանեանց) ոտանաւորները պարունակող մի գիրք է 176 երեսներէ բաղկացած։ Սկիզբը գրուած է հեղինակին պատկերը։ Դամառ–Քաթիպալի բանաստեղծութիւնները մի քանին արդէն ծանօթացուցած լինելով մեր ընթերցողներին, ա–ւելորդ կը համարինք գրել այդ մասին։

Կը ծախուի «Արմենիա» լրագրի խմբագրատունը ի դէն 1 ֆրանգ և 75 սանթիմի։ Մարսէյլէ գուրս ամեն տեղի համար 2 ֆրանգ փոստի ծախքովը հանդերձ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻՄԸ գին 50 սանթիմ.
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ » 20 »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԷԼԻ » 40 »

Ընդ ծախուիս Պարսկ., «Արմենիա» լրագրի խմբագրատունը։

Ցտար քաղաքացիներին կը դրկուի փոստով, եթէ վերոյգրեալ գիներով Թրանսպական, բրքական կամ ռուսական փոստի թղթադրոշմ դրկեն «Արմենիա»ի խմբագրատունը։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԷԼԻ

Ը Ո Ւ Ի Ք Ը
ՀԱՑԻ ՄՈՌԱՑՈՒԱԾ ԴԱՍԸ ՊԱՇՏՊԱՆՈՂՆԵՐԻՆ

Հայաստանի վիճակին նկատմամբ սրատես մաղթանքներ և մտածումներ պարունակող մի տետրակ է։

Հայաստանի բնակիչներէն Գ. Խաչիկի գրած այդ հայրենասիրական Սաղմոս կը ծախուի «Արմենիա» լրագրի խմբագրատունը։ Դէն 40 սանթիմ, փոստի ծախքովը հանդերձ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱԶԳԻ
ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ
ԳԱՒՈՒԳԱՑ ԱՌՈՂԵԱՆԱՑ
Երրորդ տպագրութիւն

Ամեն Հայի համար անհրաժեշտ պարտք է իմանալ իւր ազգի պատմութիւնը, գիտնալ թէ ի՛նչպէս սկսաւ է իւր ազգ, ո՛րտեղ ունեցաւ է իւր հայրենիք, ի՛նչպէս եկաւ հասաւ է մեր օրերը, ո՛րոնք են եղած իւր երջանկութեան և իւր թշուառութեան պատճառները և այլն։

Գէորգ Աբովեանց որ Տվղխի Ներսիսեան Վարժարանին մէջ Հայոց պատմութեան ուսուցիչ էր և որ յանկարծ մի օր երբ աշակերտները իրեն կը սպասէին Վարժարանին մէջ իւր ազնուիչ դասերը լսել, խմացաւ–ցաւ թէ անյայտացեր է, իւր աւանդած դասերուն համառօտութիւնը գրելու վրայ ամփոփած և թողած էր։ Ա.յս սխտոր դէպք պատահած է 20 տարու չափ առաջ։ Իւր եղբայրը իւր ընդերկար նորա հետք զանազան քաղաքներուն մէջ փնտռելէ յետոյ, թէ՛ իւր անյայտացեալ եղբօր յիշատակը յաւերժացնելու և թէ՛ Հայոց պատմութիւնը ուսանիլ փափաքողներին մի դիւրութիւն ընծայած լինելու համար հրատարակած է նորա գրած այն «Համառօտութիւն Հայոց Ազգի պատմութեան»ը, որ մինչև այժմ երկտող տպագրութեան արժանացած է։ Սկիզբը գրուած են Հայաստանի հին աշխարհագրութեան վերաբերեալ տեղեկութիւններ և պատմութիւն ալ այնպիսի ոճով գրուած է որ թագաւորների կռիւները միայն չներկայացուներ, այլև կը պատկերացունէ ժողովրդի վիճակը։ Մանաւորապէս Կիլիկիոյ մէջ մեր թագաւորութիւն ունեցած ժամանակ Լատիններուն դաշնակցութեան վրայ յոյս դնելով մեր կրած աղէտները և յուսահատութեան արդիւնքը ուշագրութեան արժանի ոճով ցոյց տրուած են։

Փափաքելի է որ ամեն Հայ իր տան մէջ ունենար գէթ մէկ օրինակ իւր ազգային պատմութեան դիրքէն, կարդար և կարդացունէր իւր տան մէջ գտնուողներուն։

Գ. Աբովեանցի «Հայոց պատմութեան» սոյն դասագիրքը կարելի է սառնալ «Արմենիա»ի խմբագրատունէն, ղրկելով միայն 2 ֆրանգ մէկ օրինակի համար։ Խմբագրատունը ինք կը վճարէ փոստի ծախքը։ Մէկ անգամէն 10էն աւելի օրինակ գնողին գեղչ կը լինի։ Վճարքը չղրկուած դիրք չղրկուիր։

LA TRIBUNE DES PEUPLES

Ինչպէս կը տեսնուի լրագրիս Դ երեսը դրուած ծանուցումէն, Tribune des Peuples *ընկերվարական ամսաթերթի յուլիս—օգոստոսի թիւը Հայերի նկատմամբ համակրական յօդուածներ կը պարունակէ։ «Արմենիա»ի խմբագրութիւնը բաւական քանակութեամբ ստացած է այդ թիւէ, ղրկելու համար իւր բաժանորդներէ ցանկացողներուն։ Մէկ օրինակը կը տրուի 25 սանթիմի Մարսէյլի մէջ. ուրիշ ամեն տեղերի համար 30 սանթիմ, փոստի ծախքովը հանդերձ։*

ԲԱՖՖԻ ԳՈՐԾԵՐԸ

ԿԱՅԾԵՐ

ՀԱՏՈՐ Ա

Ազգային վիպագիր Պրն. Բաֆֆիի գործերուն մէջ առաջին տեղը կը գրաւեն ԿԱՅԾԵՐը։ Ա.յս գիրքը կը ծանօթացունէ ընթերցողը տաճկական և պարսկական Հայաստանի գլխաւոր տեղերուն հետ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ քուրդերի ղեկավարներուն և Հայերի դրութեան, վարքի և բարքի մասին։ Նա ցոյց կը տայ այն ծրագիրը որուն պէտք է հետեւին Հայաստանի մէջ գործել ուզողներն։ Մի խօսքով թէ՛ իրր ազգային ընտիր վիպասանութիւն և թէ՛ իրր հայրենասիրական գործունէութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ գտնուի այս գիրքը ամեն հայրենասէր Հայի տունն։

***

ՋԱԼԱԼԷԴԻՆ

1877ի ռուս–թիւրքական պատերազմի ժամանակ Եէյիս Ջալալէդդինի արշաւանքին պատճառով Տաճկաստանի Հայերի կրած աղէտներուն մէկ աղէխարշ նկարագիրն է։ Գրքին սկիզբը կայ հեղինակին, Գ. Բաֆֆիի պատկերը։

***

Վերոյիշեալ երկու գիրքերը կը ծախուին «Արմենիա» լրագրի խմբագրատունը. ԿԱՑԾԵՐը Հատոր Ա. 6 գր. և 50 սանթիմ։ «Ջալալէդդին»ը, 2 ֆրանգ և 30 սանթիմ. Մարսէյլէ գուրս ամեն տեղի համար փոստի ծախքովը հանդերձ՝ ԿԱՑԾԵՐ Հատոր Ա. 7 ֆրանգ. «Ջալալէդդին» 2 գր. և 50 սանթիմ։

Վ Ա Ն Գ Ո Ց Ժ

1876 Յունիսի գեկտեմբերին թիւրք զօրքերը կրակ ձգեցին և վառեցին Վանի չուկային գիշեր ժամանակ։ Նախապէս պատրաստուած մի դաւադրութիւն էր այդ, քաղաքին Հայերը յետին աստիճան խեղճութեան մատնելու նպատակով։ Հրդեհին ժամանակ զօրքերն և այն թիւրք երեւելիները ապստամբողներն որոնք խորհրդակից եղած էին այս դործի, անմիջապէս խուժելին, կողոպտեցին Հայերի խանութները և մինչև որ սպա Ա.յդեստանէն (ուր կը բնակի Հայերի մեծամասնութիւնը) գիշերայն խաւար և քաղաք վազեցին, պըէթէ ամեն ինչ լմնցած էր։ Տակաւին յայսօր բաղմաթիւ է այդ հրդեհի զոհ եղող Հարուստ Հայերի թիւը որոնք անկանդնելի կերպով կոծանուած կը մնան։

Ա.յդ ժամանակ Խրիմեան Սրբազան Հայրիկը «Վանդոյժ» անուն մի տետրակ հրատարակեց որով մխիթարական խօսքեր և հայրական խրատներ կուղղէր Վանցի Հայերին և կը բացատրէր թիւրքերին ալ թէ սխալ է երեսց բռնած քաղաքականութիւն և թէ Հայերին ջնասելով բան խակ իրենց չահերի վնասած կը լինին։ Թիւրք կառավարութիւնն արգիլեց «Վանդոյժ»ի վաճառումը. բայց նորա բ տպագրութիւնն եղաւ Տփղխի մէջ ուր մամուլն ազատ էր այն ժամանակ։ Շատերէ փափաք յայտնուած լինելով մեզ այժմ ունենալ այդ տետրակ, կը փութանք ծանուցանել որ կարող են ստանալ «Արմենիա»ի խմբագրատունէն, ղրկելով միայն 70 սանթիմ։ Խմբագրութիւնը կը վճարէ փոստի ծախքը ղրկելու համար։

BIBLIOGRAPHIE
LA
TRIBUNE DES PEUPLES

REVUE INTERNATIONALE DU MOUVEMENT SOCIAL

Dans les cinq parties du monde

Rédaction et administration *Librairie des deux mondes* Paris, 17, rue de Loos.

Abonnement France : Un An 5 francs Union postale 6 francs.

Sommaire du N° 7 — Octobre-Novembre

A nos amis, La Rédaction. — L'esprit d'Initiative, Cassius. — Les Pendards au Canada, C. Dumont. — Une nouvelle Pologne (l'Arménie), F. B. Lettres des États-Unis, Frédéric Tufferd. — Les Anglais el la traite des esclaves. — MOUVEMENT SOCIAL INTERNATIONAL. — Europe. — Grèce, Roumanie, Suisse. — Asie. — Indoustan. — Afrique. — Madagascar. — Amérique du Nord. — Antilles, Californie. — Amérique du Sud. — Vénézuéla, République Argentine.

REVUE BIBLIOGRAPHIQUE INTERNATIONALE

Livres, Journaux, Revues,

Un numéro de cette revue est envoyé titre d'essai *gratis et franco* à tous ceux de nos lecteurs qui en feront la demande à la librairie des deux-mondes Paris 17, rue de Loos, avec le bulletin donnant l'Analyse, des publications en vente à cette librairie.

On s'abonne sans frais dans tous les bureaux de poste.

A. H. CREET & Cie

Cownpore N. W. P. Indes Anglaises

Négociants-Importateurs, Exportateurs, Commissionaires, Commissaires priseurs, Contractants (Fournisseurs) et fabricants de cuirs de toute qualité.

Ayant eu une très longue expérience dans les diverses branches sus–nommées, nous sommes prêts à recevoir des marchandises à la commission pour la vente tractative ou aux enchères publiques, dans des conditions qui seront trouvées réciproquement avantageuses et satisfaisantes.

En échange des marchandises Européennes nous pouvons fournir des marchandises fabriquées aux Indes, n'importe quelle quantité, des premiers choix comme suit :

Des jouets d'enfants de Lucknow, articles de laiton et des draps d'or de Benarès, dinanderies de Moradalad, bijoutèries d'or et d'argent de Delhi, châles, étoffes de Cachemire, etc.

Ayant des locaux spacieux pour l'étalage des marchandises en commission et pour la vente aux enchères, nous pouvons en toute confiance recommander notre maison à quiconque voudra entrer en relations d'affaires avec nous, et nous serons bien aises de recevoir des communications et des échantillons dans ce but.

Références

Bank of Bengal ;

Rohilcnud et Kumaon Bank ;

Agra Bank limited.

Si c'est nécessaire, nous serons heureux de fournir d'autres références.

Toute communication doit être adressée à nous directement en anglais très détaillée, avec conditions et conventions y relatives.

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : Félix ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. Schickler rue Vacon 50.